



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ՆՈՅԵՄԲԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ Կիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Առաւ 9

ՀՐԱԻԷՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Իմաստութիւնը իր տունը շինեց,
ու իր եօթը սիւները կանգնեցուց,
իւր անասունները մորթեց, իւր գինիւն խառնեց
ու իր սեղանը պատրաստեց:
Անիկա իր աղախիները դրկեց,
որ բաղաւջին բարձր տեղերը կանչեն.
«Ով որ պարգամիտ է, թող հոս գայ»:
Ու պակասամիտ եղողին ըսեն.
«Եկե՛ք, իմ հացէս կերե՛ք
ու խառնած գինիէս խմեցե՛ք:
Յիմարութիւնը թողուցե՛ք,
որպէսզի ապրի՛ք
ու խոհեմութեան նամբուն մէջ բալեցե՛ք»:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիանալաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, Կի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆ ԵՐՈՒԲՆ ՈՒՂՂՈՒԲԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 2:1-8)



ՊՕՂՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՆԹՈՍԻ ՄԷՋ (1-5)

«Երբ ձեզի եկայ՝ իմաստասիրական մեծ-մեծ խօսքերով չէր որ ձեզի պատմեցի Աստուծոյ փրկութեան ծրագրին մասին» (1 հմր): Ընդհանուր հաստատումներէ ետք, թէ ինչպէս Աստուած կ'ընկրէ այնպիսի մարդիկ, որոնք փարբեր չափանիշներով են քան աշխարհի փրկած կամ ընդունած չափանիշները, որպէսզի իրենց անձերով չարծենան, այլ Աստուծմով: Պօղոս այժմ կը ներկայացնէ իր առաքելութիւնը թէ ինչպէս փեղի ունեցաւ Կորնթոսի մէջ: Այդ քարոզութիւնը իմաստասիրական ու ճարտասանական արուեստի ներկայացում մը չէր, այլ՝ պարզ բառերով Աստուծոյ փրկութեան ծրագրին ներկայացումը Յիսուսի միջոցաւ, որ դարեր շարունակ սպասման Մեսիան էր, այսինքն՝ Քրիստոսը: Իսպ թարծրացած փրկիչը: Տակաւին, Պօղոս Առաքեալ երբեք ալ չփորձեց իմաստասիրական դպրոց մը բանալ կամ ուղղութիւն մը հիմնել: Որովհետեւ իր դարձն ալ երբեք չէր եղած խօսքի կամ ուսուցման ճամբով, փեսական փնտրութիւններ ընելով, այլ՝ Քրիստոսի անմիջական յայտնութիւնը իրեն, յայտնելով Աստուծոյ զօրութիւնը: Մարմինը փկարացած, բայց հոգին աներեւակայելիօրէն զօրացած: Այդ զօրութեամբ եկաւ քարոզելու Աւերարանը: Ան երբեք չփորձեց իր անձին կապել, այլ՝ Աստուծոյ:

«Միակ նպատակ դրած էի՝ ձեզի ճանչցնել Յիսուսը՝ Քրիստոսը, այսինքն՝ նոյնինքն խաչուած Փրկիչը» (2 հմր): Պօղոս Առաքեալի միակ նպատակն էր Քրիստոսի խաչի ճառը, անով ճանչցնելու Քրիստոսը եւ Քրիստոսի սերը: Որովհետեւ Քրիստոս իր սերը ճանչցուց մարդկութեան իր իսկ խաչելութեամբը: Քրիստոսի իսկ բառերով. «Մեծագոյն սերը այն սերն է, որով մարդ ինքզինք կը զոհէ իր բարեկամներուն համար» (Յովի 15:13):

«Ձեր քով եկած արեւնս փկար էի, սաստիկ վախ ու դողի մէջ, եւ իմաստութեան ճարտար խօսքերով չէր որ խօսեցայ կամ քարոզեցի, այլ՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ ներգործութեամբ» (3-4 հմր): Պօղոս Առաքեալ որոշ դժուարութիւններ ունենալէ յետոյ Աթէնքի մէջ, եկած էր Կորնթոս լեցուն ամէն փեսակի ամբարիշտութեամբ: Ահա այս կացութեան մէջ էր որ պիտի քարոզէր Աւերարանը, ուստի վախ ու դողի մէջ էր, ոչ անձնական իմաստով, այլ՝ իր պաշտօնը լրիւ չկարենալ կատարելու, նորադարձներ չշահելու մտաբանութեամբ: Եւ ահա անիկա դիմած էր Սուրբ Հոգիին ու ապաւինած Անոր զօրութեան, անով դարձի բերելու Կորնթացիները, որ շար աւելի ազդու է քան մարդկային ամէն փեսակի ճարտար խօսք: Պօղոս Առաքեալ այս բոլորը կատարեց ոչ թէ իր խօսքերը համոզիչ դարձնելով, մարդիկ որսալու դիպումով, այլ՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ, որ շար աւելի առարկայական են հաւարացեալի համար:

«Որպէսզի ձեր հաւատքը հիմնուի Աստուծոյ զօրութեան վրայ, եւ ոչ թէ մարդկային իմաստութեան» (5 հմր): Ահա Պօղոս ցոյց կու տայ, ոչ թէ ինք փկար էր երբ եկաւ քարոզութեան, այլ նաեւ իր խօսքերը: Պօղոս Առաքեալ երբեք համոզիչ ու փաստացի ձեւեր չօգտագործեց, որովհետեւ ինչ որ կախեալ է փաստէն, սահմանուած է զոհ դառնալու ուրիշ աւելի խելացի փաստի մը: Իսկ հաւատքի պարագային, ուրիշ քան չէ եթէ ոչ հոգիին անմիջապէս Աստուծոյ հետ ունեցած շփումը, որ կ'ունենանք այնպիսի փորձառութիւն մը, որ վեր է ամէն փեսակի փրամաբանութենէն: Ինչպէս պիտի արտայայտուի ի ձեռն կոյրը ըսելով. «Ձեմ գիտեր, թէ այդ մարդը մեղաւոր է թէ ոչ. բայց մէկ բան գիտեմ, թէ կոյր էի եւ հիմա կը փեսնեմ» (Յովի 9:25):

Այս ամբողջ հատուածի միտք բանին զգուշանալ է որ Աւերարանի քարոզութիւնը չհիմնուի անձին ձիրքին վրայ, կամ ձիրքի ցուցադրութիւն չըլլայ: Որովհետեւ այդպիսին կը սերմանէ, բայց չի հնձեր, կը քարոզէ, բայց չի շիներ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ (6-8)

«Մակայն հոգեւոր կապարելութեան հասաճներուն իմաստութիւն ալ կը քարոզենք: Բայց ոչ այս աշխարհի իմաստութիւնը, եւ ոչ ալ այս աշխարհը կառավարող ոյժերուն, որոնց իշխանութիւնը շուրով պիտի խափանուի» (6 հմր): Ճիշդ է, քրիստոնէութիւնը հակառակ «յիմարութիւն», «տկարութիւն» թուելուն, ունի իրեն յարուկ իմաստութիւն, զօրութիւն եւ ազնուութիւն, բայց անոնց համար, որոնք Աստուծոյ Հոգիով լեցուած են: Պօղոս Առաքեալի քարոզած իմաստութիւնը Աստուծոյ իմաստութիւնն է, այսինքն՝ Աստուծոյ ճշմարիտ ճանաչողութիւնը, Աստուծոյ սրեղծագործութեան ու անոր նպատակին ճանաչումը, աշխարհին ու մարդուն գոյութեան իմաստը, առաւել եւս մարդուն փրկութեան ծրագիրը: Եւ սկիզբէն Աստուած իր անսահման իմաստութեան եւ կանխագիտութեան մէջ ունէր, եւ այդ մասին սկսաւ յայտնել այն պահուն երբ մարդը Աստուծոյ պարտիրանին անհնազանդութեամբ ինկաւ մեղքի մէջ եւ կորսնցուց աստուածային շնորհներու պարմունճանը եւ դապապարտուեցաւ դրախտէն դուրս դրուելու ու մահուան: Բայց նաեւ Աստուած յիշեցուց փրկութեան կարելիութիւնը եւ փուաւ այդ աւերիսը: Միւս կողմէ, այս հատուածը նաեւ ցոյց կու տայ, թէ իւրաքանչիւր քրիստոնէայ հաւատացեալ կոչուած է հոգեւոր կապարելութեան հասնելու, բարձրանալով մարմնաւորէն, շնչաւորէն հոգեւորին: Իսկ թէ ո՛վքեր են այս աշխարհը կառավարող ոյժերը, չարին անտեսանելի զօրութիւնը, որոնք կը փրկեն այս աշխարհին, բայց շուրով պիտի խափանուին, վերջնական կորուստի մատուցուելով:

«Մեր քարոզածը Աստուծոյ իմաստութիւնն է, որ թաքուն էր եւ մեզմէ ծածկուած կը մնար մինչեւ հիմա, բայց որ Աստուած սկիզբէն իսկ, յախտեաներէն առաջ մեզի տալ սահմանած էր, որպէսզի անով մենք փառաւորուինք» (7 հմր): Պօղոս Առաքեալ կ'ակնարկէ փրկութեան ծրագրին մասին, որ խորհուրդ է, այսինքն՝ ճշմարտութիւն մը, որ գիտենք բայց չենք հասկնար: Խորհուրդ մը, որ կը յայտնուի միայն, եւ ան ալ անոնց որոնք պարտաւոր են ընդունելու: Խորհուրդը հասնկալի է միայն հաւատքի փրամաբանութեամբ եւ ներքին փորձառութեամբ:

Պահ մը անդրադառնանք ազատութեան կամ ազատ կամք հասկացողութեան: Ազատ է միայն այն մարդը որ կրնայ իր բնութիւնը իրագործել, այսինքն՝ յօժարիլ ու ջանալ ի գլուխ հանել այն վիճակը որուն սահմանած է զինք Աստուած եւ որովհետեւ չկայ ուրիշ կերպ այդ նպատակը իրականացնելու բացի Աստուծոյ սահմանած միջոցներէն, եւ այդ միջոցները կիրարկելու համար ազատութիւն պէտք է ունենալ: Ահա Աստուծոյ պարտաւորութեամբ փրկութիւնը որ նաեւ փառաւորում է:

«Այս աշխարհի իշխաններէն ոեւէ մէկը չհասկցաւ այդ իմաստութիւնը, որովհետեւ եթէ հասկցած ըլլային՝ խաչը չէին հաներ Տէրը, որ այդ փառքը պարգեւողն է» (8 հմր): Չարին ներկայացուցիչները եղող այս աշխարհի իշխանները, որոնց միտքը խաւարած էր չկրցան հասկնալ Աստուծոյ իմաստութիւնը, ու մանաւանդ փրկութեան ծրագիրը, որ յայտնուեցաւ Յիսուս Քրիստոսով: Անոր համար ալ խաչեցին Տէրը: Իսկ նոյն այս խաչեալ Տէրն է պարգեւողը իր իսկ խաչելութեամբ այդ փառքը: